Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 10 — ՆՈՅԵՄԲԵՐ 4, 1899 · ՇԱԲԱԹ, ՆԻՒ ԵՕՐՔ։ — NOVEMBER 4, VOL. I No. 10

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ·ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—o—
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար եւ չեն վերադարձուիր։
—
ԳԻՆ 3 ՍԷՆԹ։

ԶԱՅՆ Հայրենեաց

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ZAIN HAIRENIATZ
AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription $1.50 a Year.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞Վ պիտի փրկէ մեզ · — Գրական Աճապարարներ · — Նամակ Եգիպտոսէն (Ալէքսանտրիա) · — Նամակ Բրովիտէնսէն · — Նամակ Բաթըրսընէն · — Սըգահանդէս ի Ուէսթ Հօպոքըն · — Պատասխան մը · — Նամակ Խմբագրութեան — Ներքին լուրեր · — Քաղաքական · — Բանասիրական (Դուխաբօրներ · — Շարժումը կեանքէ և կեանքը չարժում)։

Ո՞Վ ՊԻՏԻ ՓՐԿԷ ՄԵԶ

Գ·

Բանաստեղծներու թագաւորը։ Շէյքսպիր, ժամանակին իր գերբնական քընարին վրայ նուագեր է·

"Բան մը չկայ, ո՛չ աշխարհում
Որ կրնայ մեզ առթել զղջում·
Եթէ միայն ինքն, Անգլիա,
Հաւատարիմ իրեն ըլլայ։"

Ահա՛ երգը, որ անգլիական ոգիին թրթիռն եղած, անոր սրտին մէջ դարէ դար արձագանգած՝ և աշխարհի նախանձը չարժող Բրիտանական վեհապանծ յաղթանակներուն գոչն ու որոտումը դարձած է։

Մեր նախընթաց երկու առաջնորդողներուն մէջ այս երգն էր որ կը ջանայինք մատնանիշ ընել՝ հայկական կեանքին վերաբերմամբ։

Չկայ աշխարհի վրայ ուժ մը այնքան հզօր, այնքա՛ն աննուաճ և այնքա՛ն յաղթական, որքան է ազգին ինքն իրեն հաւատարմութիւնը՝ իր ներքին ձգտումներուն մէջ։

Հաւատարիմ ըլլանք մեր ազգային կեանքին, զայն առողջ պահելով· հաւատարիմ՝ մեր ազգային աւանդութիւններուն, անոնցմով խանդավառուելու· հաւատարիմ՝ մեր հին ու նոր նահատակներուն մեզ թողած կտակներուն՝ անոնց իրագործմանը նուիրուելով· հաւատարիմ՝ մեր ազգային արժանապատուութեանը, զայն անձեռնմխելի և սուրբ պահելով· հաւատարիմ՝ մեր իրաւունքներուն, նոցա տիրանալու ճիգեր թափելով· հաւատարիմ՝ մեր հայրենեաց փրկութեան նպատակին, անոր համար ամէն բան զոհելով· հաւատարիմ՝ մեր յաջորդներուն, անոնց ազատ ու երջանիկ հայրենիք մը թողելու· հաւատարիմ՝ մեր ուժերուն, զայնս սնոտի տեղը սպառելէ զգուշանալով· հաւատարիմ՝ ժամանակի նշաններուն ու պահանջներուն, մէկ կողմէն պարապ տեղը տուժելէ խոյս տալու և միւս կողմէն աջալրջութեամբ ներկայացած առիթներէն օգտուելու· հաւատարիմ մեր զգացումներուն, զայնս գրծուած հաշիւներով թմրութեան չենթարկելու· հաւատարիմ մեր տոհմային քաջասրտութեան, զանի վախերու և դժուարութեանց առջև չկաչկանդելու։

Թող հայ դիւանագէտին ձիրքերը, քաղաքագէտին տաղանդը, խոհունին խելքը, հարուստին դրամը և կարիճին բազուկները ազգային կեանքէն ընձիւղած ճիւղերու պէս գրկուին մայր հողին վրայ· Թող ամէն մի անհատ տոգորուի ազգային կեանքի փրկագործ ձգտումներովը· Թո՛ղ մենք մեզի հաւատարիմ եղող ուժը ի հանդէս բերենք, այն ատեն կուգան և մեզի կը միանան նաև արտաքին օժանդակութիւններ ու նպաստներ։

Դեռ վերջերս կարդացինք թէ Անգլիա արտաքին ապստամբներուն քաղաքական պաշտպանութիւն կը խոստանայ և անոնց խրախոյս կը կարդայ իրենց օրինաւոր Խալիֆէն ունենալու, որովհետև անոնք ուժ մի են և Բրիտանական կայսրութեան շահերուն համապատասխան ուժ մը։ Եթէ մենք որ և իցէ ատեն ազգային ուժ մը կազմած ըլլայինք, դիմադրելու, կռիւ մղելու կարող՝ գէթ քիչ մը ատեն, Անգլիա և ուրիշ պետութիւններ իսկ՝ շատ աւելի պատրաստականութիւն պիտի ունենային մեզ օգնութեան հասնելու, ինչպէս Քիւպային, ինչպէս Փիլիպէսներուն և ինչպէս Կրէտէին ըրին։ Տեսանք թէ ազգաց անպտիսոյ քաղաքականութիւնն է ստրուկ ազգերու իրենց ազատութեանը համար մղած կռիւին առնասիրտ ականատեսներ հանդիսանալ· անոնց թափած արեան հեղեղներուն եզերքը կանգնած՝ անտարբեր կը մնան իր ազատութեանը համար կռուող ազգին հոգեւարքին, երկունքին հանդէպ, մինչև որ կը համոզուին թէ անոր մէջ ուժ կայ, կեանք կայ։

Անհերքելի ճշմարտութիւն է թէ եթէ մենք ժամանակին ջանայինք ազգային ուժ մը գոյացնել, որ պատեհութիւն ալ ունէինք, մանաւա՛նդ Անգլիա շատ տարբեր կերպով պիտի վերաբերուէր դէպի մեզ։ Զէյթունը եւ Եւրոպական պետութիւններու դէպի զայն ունեցած վերաբերմունքը ծանօթ է ամենուս եւ լաւ օրինակ։

Ուստի կ'եզրակացնենք։ Անցեալն անցաւ, իսկ անոր այնքան սուղ դնով մեզի ձգած փորձառութիւնները և դասերը կը մնան, որոնցմէ օգտուիլ պարտաւոր ենք։

Սերտ ու կենդանի կապերով կապուինք մեր ազգային ներքին կեանքին, անկէ առնենք մեր սնունդը, ու մեր զանազան ձիրքերովը, միջոցներովը և պատեհութիւններովը միասին կազմենք ազգային փրկագործումին բանակը։ Հաւատարիմ ըլլանք մենք մեզի, ուժ տանք իրարու, զօրացուցնենք ազգին ներկայացուցիչներուն և գործիչներուն ձեռքերը· հաւատանք, յուսանք, կազմակերպենք ազգերնիս այնպէս, որ մէկ ձեռքերնիս դիւանագիտական դիմում ու միւս ձեռքերնիս զէնքը՝ կանգնինք մեր իրաւունքներուն, մեր պահանջներուն ետեւը, եւ Քրիստոնեայ աշխարհին առջև, գիտնալով միանգամայն թէ ի՞նչ ատեն ո՞ր ձեռքերնիս վեր ու որը՞ վար պահելու ենք։

Ահա՛ այն ատեն կ'իմանանք թէ՝ ո՞վ պիտի փրկէ մեզ։

Գ· ՋԻԹՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Մեր բոլոր ԳՈՐԾԱԿԱՑԵՐԷՆ կը խընդրէինք· որ ներկայ 10րդ թուով փակէին և ԱԼՅԱՊԱՂ ղրկէին իրենց հաշիւները, մանրամասն նշանակելով թէ ո՛ր թիւ ինչքա՞ն վաճառուած է։

* * *

Շնորհակալութիւն կը յայտնենք անոնց, որոնք իրենց աջակցութեամբ ոյժ տուին ու կուտան մեզ, և ուրախութեամբ կը հաղորդենք որ "Զայն Հայրենեաց" այժմ կը տարածուի 1500 օրինակ և աւելի, ճիշդ կրկին քան ո՛ր և է հայ թերթ որ հրատարակուած է Ամերիկայի մէջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՈՒԽԱԲՕՐՆԵՐ (1)

(Ժողովրդագրական Նիւթեր Ռուսա—Հայաստանից)

Ռուսա-Հայաստանի զանազան կողմերում վերջին Ռուս-Թրքական պատերազմից վերջ իբր աքսորական գաղթականներ՝ զետեղուել էին նաև Դուխաբօր կոչուած ռուս ոգանդաւորները։ Այս փոքրիկ հասարակութեան եզական ըմբռնումներ, յատկանիշներ և կեանքն իսկ այնքան հետաքրքրաշարժ կողմերով լի են, որ այդ առթիւ համառօտ ուսումնասիրութիւն մը աւելորդ և անօգուտ չենք համարում։

Ռուս կառավարութեան ծայրահեղ միապետական դրութիւնն, որ յայտնի կերպով ճնշել և ոչնչացնել ձգտում է իրա հպատակ ռուս և միւս ժողովուրդների անհատական ինքնուրոյնութիւն, իրաւունքներ, մտքի ազատութիւն և մի խօսքով աւելի ճիշդ՝ բանականութիւն, իրա ճնշումին ուժեղութեան իբր հակադարձ այնքան ծայրահեղ և շատ անգամ էլ արտառոց երեւոյթների ծնունդ տուել է։

Այս ցաւալի դրութեան՝ այսպէս ասած՝ կատարելագործուած և տիպար ընդդիմադրական արտայայտութիւնների մարմնացումն է յայտնի գրող Տոլստոյն, իր տարօրինակ և յաճախ իսկ անբնական արտայայտութիւններով ու սնուցած օտարոտի, այլ վսեմ գաղափարներով։ Ընկերական, հասարակական կեանքի, ամուսնութեան, կառավարութեան, կրօնի և ն. ներկայ կարգերի նկատմամբ Տոլստոյի յայտնած յանդուգն և երբեմն էլ իրարի հակասական ծայրահեղ մտածումներն իրենց չափազանցութիւնների հետ միասին կ'ապացուցանեն սակայն մի բան·—իր միջավայրի երկաթէ ճանկերով ճընշիչ և կաչկանդիչ ոյժին տիրապետութեան առաջացրած վերին աստիճան բուռն ազդեցութիւնն ռուս ժողովրդի ստուար մեծամասնութեան վրայ, որ փճացնում և վատաւորում է այդ ժողովրդի բնական բեղմնաւոր և օգտակար յատկութիւններ, որ նրանց մարդկութիւնից անբան անասունների կարգ կ'իջեցունէ։

Այն ամէն ճիգեր, որ այդ դժբաղդ ժողովուրդ կանէ երբեմն իրա մարդկութեան և անհատական անբռնաբարելի իրաւունքների իբր պաշտպանութիւն, իրա վրայ կը հրաւիրէ ամենախիստ հալածանքներ։ Խորին տգիտութիւն և անտարբերութիւն, որին կարծես կանխամտածութեամբ մատնուել են նրանք· առօրեայ կեանքը այնքան դառն և ծանր է դարձել նրանց համար, որի նման հազիւ թէ այլուր կարելի լինի նշմարել։

Հաստատ հաշուած է որ Ռուսաստանի ընդարձակ դաշտավայրեր ոչ միայն 120 միլիոն հպատակներին, այլ նոյն իսկ երկրիս բնակիչներից կէսից աւելին ապրեցնելու չափ առատ բերք տալու կարող վիճակի մէջ է, չի լինիր սակայն մի տարի որ երկրին մէջ ահռելի սովը հարիւր հազարներով և միլիոններով կոտորած չի առաջացնէ եւ համաճարակ հիւանդութիւններ ահագին չափեր չի ընդունին։

Ասինք որ այս դրութիւնը իրա հոգոնեայ դրութիւններ էլ ստեղծել է, և երկու որոշ երեւոյթների տակ։ Մինն զարգացած և կրթուած դասակարգի մէջ, ինչ որ արդէն քաջածանօթ է, իսկ միւսն՝ թանձրացեալ տգիտութեան մէջ թաղուած ռուս մուժիկ, գեղջուկ հասարակութեան մէջ, թէև իրանց կոչտ ու անտաշ՝ բայց անկեղծ և գործնական արտայայտութիւններով։

Այս կարգի շատ տեսակներ եղել են և կան դեռ, որ իրանց ընկերային տարօրինակ պայմաններով և կրօնական տարբեր աղանդներով ձգտել են տիրող լուծից խուսափիլ։ Եղաւ նոյն իսկ դասակարգ մը որոյ երկսեռ հետևողներ որոշեցին երբէք չամուսնանալ և այդ կամաւոր ամուրիութեամբ կորստեան դատապարտել մարդկային սեռը, որ անարժան կը համարէին գոյութիւն ունենալու, քանի որ նա բնական կարգերի և օրէնքն ու իրաւունքների դէմ ինքնին չարիք մ'էր·— մաքեր, որ աւելի լայն և զարգացած կերպով քարոզել է արդէն Տոլստոյ։

Աւելորդ է ասել որ ռուս կառավարութիւնը բնականաբար չէր կարող այս երեւոյթներին հաշտ աչք նայիլ և ահա նոյն այդ նպատակով ձեռք առնուած արտակարգ որոշումների իբր հետեւանք՝ այս օրինակ աղանդաւորների շատանալու և ծաւալումների դէմն առնելու համար, որոշումներ եղան նոյն իսկ նրանց նորածին սերունդն խլել նրանցից, որ նրանց ձեռքով չի մեծնային միևնոյն գաղափարներով· աքսորել զիրենք բուն ռուս տարրերէն հեռուներ, որ չի վարակեն նրանց, ևն՝ ևն։

Ս—Մ·

(Շարունակելի)

(1) Այս անուն կը նշանակէ «ոգեպաշտներ"։

ՖԱԼԱՖԱԿԱՖ

ԱՆԳԼԻՈՑ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՁԵՆ ՄԻՋԱՄՏԵՐ

Ֆրանսական պաշտօնական աղբիւր մը կը յայտարարէ թէ՝ ոչ Ֆրանսա ոչ ալ Ռուսիա մտադիր են միջամտել Անգլօ—Պօէրներու պատերազմին. Նոյն ատեն կը յայտարարէ թէ Գերմանիա է միակ կառավարութիւնը, որ առ այժմ կը հետաքրքրուի հարաւ. Ափրիկէի գործերով։ Նոյն ատեն Գերմանական աղբիւրներէ ալ կը զեկուցուի թէ Գերմանիա բոլորովին չէզոք պիտի մնայ։ Այս բանին կրնայ ապացոյց համարուիլ այն՝ որ կայսրը որոշած է Նոյեմ. 20ին Անգլիա այցելել։

Նկատելի է նաև որ Գերմանիա այժմ բաւական ներքին դժուարութիւններուն Բրուսիոյ հետ, ջրանցք մը բանալու խնդրով, որը խիստ կարևոր վնաս պիտի պատճառէ Բրուսական առևտուրին, որոյ պատճառաւ վերջնոյս կառավարութիւնը զօրաւոր ընդդիմութիւններ կընէ կայսրութեան յարուցած յիշեալ խնդրոյն դէմ, և վտանգաւոր երևոյթներ ունեցող լարումներ կան։

Աւստրիա քաղաքական պատերազմի մը երեկոյեան մէջ կը գտնուի։ Այս բանին միակ արգելիչ հանգամանքը այն եղած է, որ Աւստրիոյ բոլոր ժողովուրդը կը պաշտէ իբր Հայրիկ ներկայ Յովսէփ կայսրը. սակայն հակառակութեանց յուզումները այն աստիճան բորբոքած են, որ ներքին յեղափոխութիւն ծագելու ամեն օր վախ կայ, առանց սպասելու որ Ծերունի կայսրը մեռնի։

Ռուսիոյ մէջ նաւային խիստ ահռելի զեղծումներ երևան ելեր են և այսօր 40ի մօտ բարձրաստիճան նաւային պաշտօնեաներ զինուորական ատեանի առջեւ դատուելու կը քաշուին։ Նաւային պատրաստութեանց յատկացուած ահագին գումարներ փճացուած են տարիներէ ի-վեր, և այդ զեղծումները ցարդ գաղտնի մնացեր են, որովհետև զեղծումը գործողներ խիստ խոշոր գումարներով կաշառեր են իրենց չուրջը գտնուողները։ Այս բանը զօրաւոր կերպով կը կաչկանդէ Ռուս կառավարութիւնը։

Ֆրանսա արդէն իր կարգ մը ներքին դժուարութիւնները ունի։

Ահա այս բաներ ալ կուգան զօրաւոր կերպով կաչկանդել այն պետութիւնները, որոնք թերեւս պիտի կամենային Անգլիոյ դէմ զինուելու։

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐՔԸ

Ժընէվի Ճըրնալը Կ. Պօլսէն լուր մը կը հրատարակէ թէ՝ Ռուսիա որոշած է մօտ օրերս իր Կ. Պոլսոյ դեսպանին միջոցաւ պահանջագիր մը ներկայացնել Դըրան՝ պահանջելով որ Վոսփորը և Տարտանելը բաց պահուին։ Կըսուի թէ, եթէ Անգլիա արդէն համաձայնած չէ այս պահանջին, անկէ այնպիսի դժուարութիւններ պիտի ծագին, որոյ առջև Թրանսվալի խնդիրը նշանակութիւն չունենար։

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՀԱՐԱՒ. ԱՓՐԻԿԷ

Մ. Նահանգաց կառավարութիւնը հրամայած է ծովակալ Շիլայի որ հարաւ. Աթլանթիքի նաւախմբովը հարաւ. Ափրիկէի ջուրերը երթայ, որուն ուրիշ պատերազմական նաւեր ալ պիտի ղրկուին՝ եթէ հարկը պահանջէ։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլ. զօրքերը, որ կեդրոնացած էին Լէյտի Սմիթ իբր 15,000 մեծ յարձակում կրեց Պօէրներէն և իբր 2000 անգլ. լաւագոյն զօրքերէն գերի ինկան։ Լէյտի Սմիթը այժմ պաշարուած է։ Կը կարծուի որ Հուայթ հրամանատարը դէպի Հարաւ նահանջէ, սակայն լուր կայ թէ՝ Պօէրները ետևի կողմէն կամուրջները քանդած ու ճամբաները բռնած են. անանկ որ վախ կայ թէ անգլիացիք մեծ վարանման մէջ իյնան։ Անգլիական բանակին վիճակը շատ վտանգաւոր է եւ ամենը մէկանց անձնատուր ըլլալու վախ կայ։

Զօր. Պուլլը որ շաբաթներէ առաջ լիազօր իշխանութիւնով և 90000 զօրօք Հարաւ. Ափրիկէ ուղևորուեցաւ, շաբաթ մը առաջ չի կրնար Զօր. Հուայթի օգնութեան հասնիլ։

Անգլ. պատերազմական նախարարը կրկին պահեստները զէնքի տակ կոչելու շրջաբերական հաներ է՝ Ափրիկէ նոր զօրագունդեր հասցուներլու։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Վաղը (Կիրակի) Ս. Ոսկեբերան եկեղեցւոյ մէջ Արժ. Խադ վարդապետ պիտի քարոզէ Նիւ Եորքի ազգային։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ ԼՍԱՐԱՆ ՆԻՒ ԵՈՐՔԻ

Հայկական Ազատ Լսարանի ժողովը տեղի կունենայ յառաջիկայ Կիրակէ (5 Նոյեմբ.) Elks Hall ժողովասրահին մէջ ի թիւ 19 W. 27րդ փողոց Պրոտուէյի անկիւնը։ Ժողովը կը բացուի ճիշդ ժամը 8ին և կը փակուի 10ին։

Լսարանի մէջ պիտի խօսինք՝ նիւթ ունենալով՝ «Մեր պարտքը»։

Ամեն հայ, ինչպէս նաև տիկնայք եւ օրիորդք, սիրով կը հրաւիրուին լսել եւ օգտուիլ սոյն կարեւոր ատենախօսութենէն։

Թեմական Հովիւ
ԽԱԴ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱԶԴ

Բաղաքիս Հայկազեան Կաճառն որոշած է շքեղ հանդէս մը տալ Դեկտ. 2, Շաբաթ երեկոյ, ուր բացի այլ եւայլ ներկայացումներէ ու զինուորական ցոյցերէ, Սպանօ-Ամերիկեան պատերազմի ներկայացումներ ալ պիտի տրուին։

Ի Դիմաց Հայկազեան Կաճառի
ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

ԿԸ ԾԱԽՈՒԻ

Նպարավաճառի խանութ մը, նաեւ նոյն խանութի ետև նոյն շէնքին մէջ հայկական ճաշարան մը, հացի փուռ մը, ձի մը և կառքը ստիպուած ենք ծախել՝ անհրաժեշտ երկիր երթալու պէտք զգալնուս համար։ Զափաւոր գնով պիտի ծախենք. փափաքողք կրնան նամակաւ կամ անձամբ դիմել հետևեալ հասցէին։

Ա. Պէտոեան,
37 Center St., Cor. Middlesex.

ՊԱՏԿԵՐՆԵՐ
(Մեր Կեանքէն)
Գրեց
Վ. ՇԱՀԷՆԻ
Գին 15 սէնթ։

Կը պարունակէ չորս վէպիկներ Հայաստանի Նորագոյն իրական կեանքէն առնուած։

Կը վաճառուի Նիւ Եորքի մէջ «Ձայն Հայրենեաց»ի Խմբագրատան և Հայկական Ընթերցարան՝ թանգարանապետ՝ Պ. Ղ. Պօյաճեանի մօտ։

Բրովիտէնս Տ.թ. Ա. Շահպազեանի մօտ։
74 North Main St. Prov. R. I,

Թրոյ՝ Պ. Մ. Հայրապետեանի, Մանչէսթըր Պ. Մ. Արոյեանի և Ֆրէզնօ Պ. Ա. Պարթեւեանի մօտ։

Ուսար Պ. Գրիգոր Պօյաճեանի մօտ։

Սակաւաթիւ օրինակներ մնացած են։

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

Սովորական բանաձևը չէ։

Ես որոշած ըլլալով դպրոց երթալ, կօշկակարի խանութս կը վաճառեմ։ Խանութին արդէն ունեցած յաջողութիւնը ընտանիքի մը ապրուստը գոհացուցիչ կերպով կ'ապահովէ։ Իրօք առանձին գործ ընել փափաքողի համար լաւ պատեհութիւն է։

Մ. Տ. ՃՈՐՃՈՐԵԱՆ
154 East 28th St.

1—2

Ա Զ Դ

Նիւ Եորքի 28րդ փողոցի Հայկական ճաշարանը իմ գրաւիս տակ ըլլալով կառավարութեան օրինօք՝ եթէ մէկը գնել կուզէ՝ թող դիմէ ինձ։

Մ. ՂԱԶԱՆՃԵԱՆ

Լոյս տեսաւ

ԱՌ ՁԵՌՆ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ
Անգլիերէն և Հայերէն

Աշխատասիրեց
ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

Հրատարակութիւն Էլիաս Խալաֆ և Ընկ.
Նիւ Եօրք

Կը պարունակէ շուրջ 25,000 բառեր, ընտիր Ամերիկեան արտասանութեամբ և խիստ դիւրահասկանալի բացատրութիւններով։

Գին ն է $2.50

Դիմել առ J. CHOOLJIAN,
College Point, N. Y.

Գրքերը Հոկտ. 20էն վերջ ծախու պիտի գտնուին հետևեալ անձերու քով.

Մամլաքաթեան Եղբարք, Փաթրսն, Ն. Ճ.
Յ. Պասմաճեան, Սթերլինկ, Ն. Ճ.
Ապահունի Եղբարք, Զըլսի, Մասս.
Խ. Կոստանդեան, Լօրէնս, Մասս.
Յ. Բարակեան, Ուսթըր, Մասս.
Թ. Թօփրահանեան, Ֆրէզնօ, Քալ.

Ներկայիս կը խնդրեմ մեր բաժանորդներէն, որ հաճին իրենց Առ Ձեռն Ամերիկեան Բառարանիս բաժանորդագրութեանց ստացագրերը ինձ վերադարձնել իրենց ներկայ հասցէովը մինչեւ և ստանալ իրենց Բառարանը։

Պ. Ռ. Թորոսեան
564 Clinton Ave.
West Hobeken, N. J.

Կը ծախուի նաև խմբագրութեանս քով։

Յառաջիկայ կիրակի առաւօտ (Նոյ. 5) Հայ մարտիրոսաց յիշատակին քարոզը պիտի խօսի Արժ. Պատ. Ալէն, ամենուս սիրելի միսիոնարը, Նիւ Եորքի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ՝ 30րդ փողոց 3րդ ավենիւին մօտ, ուր նաև Հայ նահատակաց համար յատուկ հանդէս պիտի կատարուի։

Ամեն Հայ կը հրաւիրուի։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Հ. Ե. Թանգարանի Միութեան 10րդ շրջանի անդամակցութիւնը բացուած է։ Ուրախ ենք յայտարարելու որ սոյն Գրադարանը վերջերս չափազանց ճոխացած է, թէ այլ և այլ օգտակար գրքերով եւ թէ բազմատեսակ թերթերով։

Ամեն ճաշակի յարմար ընթերցանութեան գրքեր և թերթեր միշտ տրամադրելի են։

Զէի՞ք փափաքէր տարեկան միայն մէկ տօլար վճարելով անդամակցիլ սոյն բազմօգուտ կազմակերպութեան և ամբողջ տարի մը ձեր միտքը բեղմնաւորելու հաճոյքը վայելել։

Թանգարանը բաց է ամեն Գշ. Եշ. Շբ. գիշերները ժամը 8—10, իսկ կիրակիները 1—5։

Շնորհիւ սոյն բարեկարգութեան եւ կարգուսարքին, որ մուտ գտան վերջերս Թանգարանին մէջ, ընթերցողներու թիւը հետզհետէ կըստուարանայ։

Առատ ընթերցանութեան նիւթ, յարմար ժամադրավայր, ծայրայեղ կարգապահութիւն։

Այցելեցէք անգամ մը և համոզուեցէք։
145 E. 23րդ փողոց։ ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

ՄԱՐԹԻՆ ԳԻՆՕ

Վաճառանոց տնական ամեն կարգի կահ կարասեաց։

Հայերը ասկէ պատշաճագոյն տեղ չեն կրնար գտնել գնելու, մահճակալ, մեթրէս, սեղան, ջեռոց, կարպետ և որ ի կարգին։

Հասցէն է՝
MARTIN KEENOW
79 Green St. ; Albany N. Y.

ԱԶԴ

Գ. Ս. Քէպապեան, որ այս երկրի մէջ առաջին և միակ հայն է որ արտօնացուած է իբրև օրինական փոխանորդ և խորհրդատու, փոխադրած է իւր պաշտօնատեղին ի թիւ 181 Պրոտուէյ (Նիւ Եորք), ուր կը շարունակէ իւր փաստաբանութիւնն անկախաբար։

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Ս. Տամպուրաճեան

509 2րդ Ավենիւ. 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արևելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և առօրեայ թարմ միս։

Ուստրի պատուական պըլղուրը և ծեծածը փաւընոը 3 սէնթ, մեծաքանակ գնողներուն համար 2½ սէնթի, Հայկական պանիրին փաւընոը 15, իսկ մեծաքանակ գնողին համար 13½ սէնթի։ ձիթապտղին փաւընոը 10 շատ գնողներուն համար 9 սէնթի, ձիթապտուղի պատուական իւղին գէլընը $1.40 ի կը ծախենք։

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին։



ԴԵՐԶԱԿ
ՑԱԿՈԲ ՈՒԶՈՒՆԵԱՆ
159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աժան հանդերձ կը փնտռէք, անանկ չէ՞. — մենք սուղ կը չինենք — բայց չէ. մեր գործին որքա՜ն աժան ըլլալը ատեն մը գործածուելէն ետքը միայն կրնաք հասկնալ. անանկ որ իրենց դրամը անարժէք ապրանքի տուած ըլլալու զղջումը չեն ուզեր ունենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզի հանդիպելնուն համար ուրախ պիտի ըլլան։ Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք։

Ուրիշ տեղերու վրայ հարիւրին քառասուն աժան պատրաստի հանդերձ ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարդուկենք։

Գիտնալու համար թէ, մենք մեր հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կառնենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ։

ԱԶԴ

Նիւ Եորքի Պլղուրի Ընկերութիւնը առ այժմ լուծուած է, ցնոր կարգադրութիւն։

Ա Զ Դ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան Կաճառը տեղափոխուած և աւելի հոստատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ավենիւ 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8էն 10ը։

Կ'ՈՒԶՈՒԻ

Լաւ խոհարար մը կուզուի գոհացուցիչ շաբաթականով։

ԳՐԻԳՈՐ ՄԱՍՈՒՄԵԱՆ
Silk Mille , Summit N. J.

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ

Եգիպտոսէն Գրիգոր Ճիէրճեանի և Եղիա Փէհլիվանեանի (Արաբկերցիք) հասցէները հաղորդել Խմբագրութեանս կամ Թրոյ Մ. Հայրապետեանի։
P. O. Box 474 Troy N. Y.